ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 01, 11.03.2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 04.03.2022թ. որոշում (որոշում ՈՐԽ0102-14/Լ-Հ) արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 -14/L-Հ
Դաս: » ՀՊ
«04» մարտի 2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) Կանոնադրության 12.1 կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետության կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծության արդյունքները՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո մեկ տարվա ընթացքում թողարկել մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ծավալով դրամային և մինչև 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով):
2. ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը սահմանել 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի համար սահմանել 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:
3. Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի (բաժանորդագրության) ձևով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:
4. Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները սահմանել Բանկի Խորհրդի առանձին որոշումներով:
5. Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի և ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակում չսահմանել՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
6. Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24[00]-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին մինչև պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման աշխատանքային օրվա ժամը 14[00]-ը:
7. Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24[00]-ի

դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին մինչև պարտատոմսերի մարման գումարի վճարման աշխատանքային օրվա ժամը 14⁰⁰-ը:

8. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրեն Մ"Անանյանին՝ պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ՝ գրանցման:
9. Պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 38/Լ-Հ որոշմամբ հաստատված «Պարտատոմսեր թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**